№ 56 Апрիլ 3 (15) 1880 Апрիլ 3 (15) № 56

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են Մշակի խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գոնէ այժմ ամաչէինք։—Ներքին տեսութիւն։ Նամակ Արդահանից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Մօսկվայից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Խենթը։

ԳՈՆԷ ԱՅԺՄ ԱՄԱՉԷԻՆՔ

«Մշակի» ներկայ համարում ընթերցողը կը կարդայ մի նամակ Ալէքսանդրապօլից, որի մէջ պատմվում է թէ ինչպէս այդ քաղաքի մի քանի հայ-լուսաւորչականները հալածում են նոյն տեղի հայ-բողոքականներին։

Մի՞թէ մենք միջին դարերումն ենք ապրում...

Մենք պատրաստ ենք հաւատալ որ հալածանքները կատարվում են մի քանի անկարգ մարդիկների ձեռքով, որոնք հայ հասարակութեան բարեփոխ մեծամասնութեան հետ ոչինչ կապ չունեն, —բայց այնու ամենայնիւ կարծում ենք որ առհասարակ լուսաւորչադաւան հայերը պէտք է անտարբեր չը մնային այդ տեսակ անիրաւութիւն տեսնելով և ամեն ջանք գործ դնէին անկարգութիւն անողներին զսպելու համար։

Գոնէ այժմ, երբ բոլոր հայերի միմեանց մէջ սէրը, միութիւնը աւելի քան որ և է ժամանակ անհրաժեշտ է, երբ մեր թիւրքիահպատակ եղբայրները սովամահ են լինում և նրանց պէտք է օգնենք միացած ոյժերով, գոնէ այժմ, ասում ենք, լուսաւորչադաւանները ամաչէին այնպիսի դէպքերից, որոնք արատ են բերում նրանց անուանը։

Մի՞թէ ժամանակակից հայը իր վարմունքով դէպի իր այլակրօն եղբայրները պէտք է հերքի իր պատմական բոլոր գովելի յատկութիւնները....

Հայի բնաւորութիւնը մեր պատմութեան ամբողջ ընթացքում, բացի դուցէ վերջին երկու, երեք դարերից, յայտնի էր միշտ որպէս դէպի ուրիշ հաւատը վերին աստիճանի համբերող բնաւորութիւն....

Այդ հրէշաւոր ֆանատիկոսութիւնը, այդ սարսափելի մոլեռանդութիւնը և հալածասէր բնաւորութիւնը, որ նշմարվում է ժամանակակից հայի մէջ, մենք երևի սովորեցինք մահմետական աշխարհից, որի ներգործութեան տակ մենք այսքան դարեր դաստիարակվել ենք և որին մենք պարտական ենք մեր այժմեան բնաւորութեան շատ և շատ կողմերով....

Գոնէ այժմ, աղգի այդ տխուր ճգնաժամի ժամանակ, ամենայն մարդկային արժանաւորութիւնը ստորացնող հալածանքներից։

Ռուսաց մայրաքաղաքների մամուլը, մանաւանդ «Голосъ» լրագիրը, պարզ ասում են որ եթէ ռուս ժողովուրդը մինչև վերջին ժամանակները անողորմ կերպով հալածելիս է եղել իր բաղմաթիւ այլ և այլ աղանդաւորներին, այդ յատկութեամբ նա պարտական է մասամբ իր կղերին, որի ներկայացուցիչներից շատերը աղանդաւորների դէմ հալածանքներ են յարուցել թէ մոլեռանդութիւնից և թէ շահասիրութիւնից դրդված...

Մի՞թէ մեզ հայերիս, պէտք է արգելված լինի ասել, որ մենք էլ մեր վերջին դարերի հլու հպատակութեամբ դէպի մահմետական իշխանութիւնը մի կողմից և անխնայ հալածասէր բնաւորութեամբ

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԻԳ.

Ծերունի խաչօի տան մէջ կեանքի սովորական եղանակը, որ ունէր նա վերջին օրերում, բաւական փոփոխութիւն էր ստացել։ Պ. Սալմանը (տանտէրը դեռ նրան պ. Դուդուկչեան էին կոչում) չատ անգամ տանը չէր գտնվում։ Նա և Վարդանը երբեմն հեռանում էին Օ....գիւղից և օրերով չէին վերադառնում։ Հայրապետը և Ապօն այժմ խիստ մտախոհ և ծածկամիտ էին դարձել։ Նրանց միւս եղբայրներին արդէն անտանելի էին դարձել երկու օտարական հիւրերը, որոնց վարմունքը, որոնց «խենթութիւնները» նրանց հաճելի չէին թւում։ Ինքը ծերունի խաչօն այժմ զբաղված էր գիւղային գործերով, որ օրըստօրէ աւելի ծանրանում էին և նրան չատ հոգսեր էին պատճառում։ Այս պատճառով տանուտէրի օգնան համարեա կորցրել էր իր կենդանութիւնը և նրա մէջ մեծ մասամբ դադարել էին գիշերային խօսակցութիւնները, վիճաբանութիւնները և անսովոր դատողութիւնները, որ լինում էին առաջ։

Միայն անփոփոխ մնացել էր կանանոցի կեանքը։ Նա իր միակերպութիւնը պահպանել էր դարերով և նոյնպէս չարունակվում էր։ Հայ ընտանիքի այդ կտրված, առանձնացած, և տղամարդերի հասարակութիւնից անջատված բաժինը ոչինչ մասնակցութիւն չունի, թէ ինչ են խօսում, ինչ բանի վրա են մտածում տղամարդիկը։ Իրանց տնտեսութիւնից, իրանց տնային հոգսերից դուրս, ոչ մի օտար միտք չէ զբաղեցնում նրանց։ Եւ այս պատճառով օդայի մէջ եղած խորհուրդների մասին նրանք ոչինչ չը գիտէին։ Տանուտէրի օգան, այդ գիւղական կլուբը, դեռ մատչելի չէր կանանց հասարակութեանը։

—Դրանց, կանանոցի չորս պատերի մէջ թաղված այդ ուժերին պէտք է քարշել գործի մէջ, այն ժամանակ, անտարակոյս, յաջողութիւնը մեր կողմը կը լինի...ասում էր չատ անգամ պ. Սալմանը։

—Դեռ վաղ է, պատասխանում էր նրան Վարդանը,—պէտք է նախ և առաջ պատրաստել նրանց։

—Ոչինչ վերանորոգութիւն մի ժողովրդի կեանքի մէջ չէ կարելի կատարել առանց կնոջ մասնակցութեան։ Եթէ մեր ժողովուրդը մնացել է անշարժ, դրա գլխաւոր պատճառը այն է, որ կինը չէ մասնակցում հասարակական գործերի մէջ։ Այդ ուժը, այդ կենսատու զօրութիւնը, կանանոցի չորս պատերի մէջ ոչնչանալով, ապարդիւն է դառնում մեզ մօտ։ Եթէ պէտք էր սկսել մեր ժողովրդի կրթութեան գործը, սկիզբը դնելու է անպատճառ կանանց կրթութիւնից։ Ես այս անդամ պտրտեցայ ամբողջ Հայաստանում և ամեն տեղ ուշի-ուշով ուսումնասիրում էի հայ կնոջը։ Իմ ստացած տեղեկութիւնները խիստ մելancholական հետևանքի են հասցնում։ Որքան տղամարդը թուրքերի ազդեցութեան տակ խարդախված է, փչացած է, որքան նա կորցրել է իր հայկական ինքնուրոյնութիւնը,—այնքան կինը պահպանվել է մաքուր, պահպանվել է իր բարքուվարքի բարոյական անարատութեան մէջ։ Չը կայ չարիք առանց բարիքի։ Կանանոցի չորս պատերի մէջ փակված կինը, թէև դարերով տանջվեցաւ, բթացաւ և զրկվեցաւ հասարակական մարդ լինելուց,—բայց միւս կողմից, նա իր այդ բանտարկութեան մէջ պահպանեց հայութիւնը։ Դա մեծ գործ է։—Որքան տղամարդը դրսում մահմետական տարրի ազդեցութեան ներքոյ կորցնում էր իր ազգային առանձնութիւնները, այնքան կինը կանանոցի մէջ, հեռու մնալով այդ ազդեցութիւնից, պահպանում էր ազգայնութիւնը։ Այսպիսով անգիտակցաբար պահպանվում էր մի մշտական հաւասարակշռութիւն։ Տղամարդի կորստի տեղը լցնում էր կինը։ Այդ կարելի է տեսնել ամենահասարակ մանրամասնութիւնների մէջ անդամ։ Կնոջ զգուանքը դէպի մահմետականութիւնը հասնում է սարսափելի մոլեռանդութեան. ամեն ինչ, որ դուրս է գալիս մահմետականի ձեռքից, նա պիղծ է համարում։ Նրա մորթած միսը, նրա մակարդած պանիրը, նրա թխած հացը չէ ուտում։ Բայց տղամարդիկ այսպիսի խտրութիւններ չը գիտեն։ Ես լսել եմ հարիւրաւոր պատմութիւններ, որ մահմետականներից յափշտակված կինը, աղջիկը կամ վերջապէս փախչում է, կամ եթէ չէ յաջողվում, անձնասպան է լինում։ Բայց տղամարդերի վերաբերութեամբ այստեսակ օրինակներ խիստ սակաւ են։ Կայ մի ուրիշ բան ևս, որ ամենազլխաւորն է. չատ տեղերում, մանաւանդ քաղաքներում, թուրքերէն լեզուն հայ մարդու բերնում բոլորովին սովորական է դարձել. բայց ես չը տեսայ մի կին, որ թուրքերէն խօսէր, կամ գոնէ գիտենար այդ լեզուն։ Հայոց լեզուն ընտանիքի մէջ պահպանողը և իր զաւակների բերանը դնողը կինն է։ Նա իր հեղինակութիւնը բանեցնում է մինչև անդամ օտարների վերաբերութեամբ։ Հայերի տներում ծառայող քրդերը և քրդուհիները բոլորը հայերէն են խօսում։ Կինը տուեց մեզ լեզու, աղդութիւն և պահպանեց հայ ընտանիքի բարոյական հիմունքը։ Այժմ նա մի անարատ, չապականված և անմշակ նիւթ է մեր ձեռքում, որից կարելի է հրաշալի բան շինել։

Այսպիսի և դրա նման մտածութիւններ վերջին օրերում պ. Սալմանի սովորական խօսակցութեան առարկան էին։ Բայց չը նայելով, որ նա այնքան լաւ կարծիք ունէր հայ կնոջ մասին, ծերունի խաչօի տան կնիկները նրան չէին համակրում։ Հասկանալի է, որ նրա ներքին, բարոյական և մտաւոր արժանաւորութիւնները նրանք ճանաչել կամ գնահատել անկարող էին, բայց պ. Սալմանը իր արտաքին կեղևի մէջ նոյնպէս ունէր չատ բան, որ կարող էին գրաւել ամեն մի կնոջ ուշադրութիւնը։ Բայց կինը զարգացման զանազան աստիճանի և ժողովրդի զանազան դասերի մէջ տարբեր ճաշակներ ունի տղամարդի արժանաւորութիւնները գնահատելու և նրան սիրելու վերաբերութեամբ։ Այս պատճառով, չատ զարմանալի չէր, որ ծերունի խաչօի հարսները Վարդանին աւելի բարձր էին դասում պ. Սալմանից։

Միանգամ, յետ-կէսաւուր հանգստի ժամանակ, սրահի մէջ նստած էին հարսները, և իւրաքանչիւրը զբաղված էր իր ձեռագործով. մէկը սանտերքի վրա բուրթ էր գզում, միւսը իլիկով մանում էր գզած բուրթը, երրորդը ոստայնի վրա գործում էր մի գեղեցիկ գունաւոր գորգ, չորրորդը իր երեխաների համար չորեր էր կարում, մի խօսքով, ամեն մէկը իր առանձին գործը ունէր։ Խօսակցութեան առարկան պ. Սալմանն էր։

—Սառա, հարցրեց նրա տեղերկինը՝ մանկահասակ փարիչանը,—այդ մարդը մեր գիւղում ինչ պիտի չինէ։

—Ասում են, ուզում է վարժատուն բաց անել, պատասխանեց Սառան։

—Նա խօ տիրացու չէ, ասաց փարիչանը, որի կարծիքով վարժապետը պէտք է անպատճառ տիրացու լինէր։

—Տիրացու է, Ստանպօլի տիրացու է, կրկնեց Սառան։

—Ապա ինչու ժամ չէ գնում, չարական չէ ասում։

Սառան ուրիշ պատասխան չը գտաւ, և առանց մտածելու ասաց.

—Դա էլ այդպիսի տիրացու է։

Մէջ մտաւ Ապօի կինը՝ գեղեցիկ Մարօն,

—Մարդս ասում էր, որ աղջիկներ էլ պիտի կարդացնէ։

Մարօի խօսքը բարձրացրեց ընդհանուր ծիծաղ։

—Աղջիկը ինչ կանէ կարդալը, աղջիկը խօ տէրտէր կամ վարդապետ չի դառնալու, պատասխանեցին Մարօին։

Հարսներից մէկը դարձաւ դէպի փոքրիկ Նաղլուն, ասելով.

—Լսում ես, Նաղլու, դրանից յետոյ պիտի գընաս վարժատուն և այբ-բեն սովորես։

Նաղլուն Հայրապետի աղջիկն էր, նա բաւական համարձակ կերպով պատասխանեց.

—Ի՞նչ կայ, կը սովորեմ, յետոյ ժամ կը գնամ, ժամի չապիկ կը հագնեմ ու տղերքի նման ափոխ կասեմ։

—Հոդը գլխիդ, էդ էր պակաս, պատասխանեցին խեղճ աղջկան։

Փարիչանը, որ այդ խօսակցութեանը առիթ տուեց, մի նոր հարց ևս առաջարկեց.

—Տիրացու Սիմօնը կարդացնում է մեր երեխերքին, էլ ինչ կանենք ուրիշ վարժապետը։ Այդ մարդը խօ նրանից չատ չէ՞ իմանում։

—Ի հարկէ, չատ չէ իմանում, պատասխանեց Սառան,—տիրացու Սիմօնը չատ է կարդացել, բայց նա մէկ պակասութիւն ունի, որ հարբում է ու երեխերքին ծեծում է։ Ցիչում ես մեր հարևան Կասպարի տղային, այնքան ծեծ էր կերել, որ չա-

դէպի մեր համարիւն այլակրօն եղբայրները միւս կողմից,—մեծ մասամբ պարտական ենք եղել մեր տգէտ, մոլեռանդ և շահասէր հոգևորականներին։

Մենք կարծում ենք որ մեր ենթադրութիւնը կարող է մասամբ ուղիղ համարվել, որովհետև անհամբերողութիւնը դէպի ուրիշ հաւատը, մոլեռանդութիւնը և հալածասէր ոգին երբէք յատուկ չեն եղել հային իր պատմական կեանքի ամբողջ ընթացքում։

Ուրեմն այդ բնաւորութիւնը երևի արուեստական կերպով պատուաստված կը լինի հային իր հոգևոր առաջնորդների ձեռքով։

Մենք կրկնում ենք գոնէ այժմ արթնանայինք, գոնէ այժմ խելքի գայինք, գոնէ աղգի այդ ծանր ճգնաժամի ժամանակ ամաչէինք հալածել մեր համարիւն եղբայրներին, երբ հարկաւոր է միմեանց սիրել, միմեանց օգնել, միմեանց պահպանել։

Դ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐՏԱՀԱՆԻՑ

մարտի 20-ին

Ներկայ դարում այս քաղաքը շատերին յայտնի չէր մինչև ռուս-տաճկական պատերազմը, որ իր ամուր և համարեա անառիկ «Ռամազան և Ամբրոզի» մարտկոցներով զբաղեցրեց ռուսաց կորիւնները, մինչև տաղանդաւոր ռազմագէտ հայ կոմսը գրեց անյաղթ Արծիւի իրաւանց ներքոյ։ Սորա առումը, որ անընդմիջապէս կապ ունէր Կարսայ ամրութեան հետ, աշխարհ տարածվեցաւ և ռուսաց մայրաքաղաքների մինչև անգամ ցնծութեան և տօնակատարութեան փառաւոր պատիւն ունեցաւ։ Ահա այդ օրից լսվեցաւ Արտահանի անունը և պատմութեան մէջ ժառանգեց իր յարմարաւոր տեղը։ Բայց հայ պատմաբանները գիտէին սորա անունը, որ Ցայոց աշխարհումն է և սահմանագլուխ երբեմն Հայաստանի-Վրաստանի։ Ուրեմն պէտք է եզրակացնել, որ այս դաւառը շրջապատված և լի է եղել հայերով, որ այժմ մի հատ էլ չը կայ. իսկ իր հարևան Ղաւէտը, Փոցխովը աւելի գրաւած է վրացի ազգաբնակութեամբ։ Սորան թող ապացոյց համարվի դաւառումս գտնված այն կիսակործան, աւերակ եկեղեցիներն ու վանքերը, որոնք հարիւրաւոր տարիք բնութեան և թիւրքերի մոլեռանդութեանց դէմ դնելով, այսօր կենդանի վկաներ են ներկայանում։ Ցիշում ենք Ալէքսանդրապոլում մի քանի հայ զերդաստաններ, որոնք կրում են «արտահանցի» անունը և ծերերը պատմում են իրանց գաղթականութեան թիւը, թիւրքերի մոլեռանդութիւնից ստիպված։ Կարծում ես, սիրելի ընթերցող, ամբոջ դաւառը գաղթել է և այս ու այն կողմ ցրուել։—Ամենևին ոչ։—Այլ համարեա թէ բոլորը մահմետականութիւն է ընդունել։—Ահա քեզ մի անհերքելի փաստ։—Շրջիր դաւառիս գիւղերը, կը լսես գոցա անունների մի մեծ շարք,—օրինակ, Անուշաւան, Լօռի, Դատագիւղ, Նուշերևան, Աղաշէն, Արտանակ, Ջզրաշէն, Զորվիրաբ, Խի, Պէտրէ-Պավէ, Շատրվան, Ցիկոր և այլն, բոլորը հայկական։ Մտիր դոցա տները, հետաքրքրութեամբ քննիր սովորութիւնները, մանաւանդ կրօնական, կը նշմարես հայութիւն։ Դեռ ևս կան այնպիսի գերդաստաններ, որոնք կրում են հայկական ազգանուններ։ Պատմում են տեղացիք, որ սորանից մի դար, կամ աւելի ևս առաջ, ով որ քրիստոնեաներից ընդունէր մահմետականութիւն, այնպիսուն կը շնորհվէր ամբողջ գիւղը, որ յափտեան տիրէ և այդ գիւղերի ժողովրդեան վրա բաց անուանվի։ Այդպիսիների թիւը այժմ շատ շատ են այստեղ։ Հաստատում են, որ դրա հայութիւնից սեռուած մահմետականներ են։ Արդարև երբ խօսում ես այդպիսի բագերի հետ, կարծես թէ գաղտնի զօրութեամբ դէպ իրան է ձգում ազգային արիւնը։ Բայց ափսոս, որ դրա այս բանի վրա գաղափար անգամ չունեն և աւելի մոլեռանդ են իրանց կրօնական սկզբունքների մէջ։—Մինչև անգամ ռուսը տիրելուս՝ մի թիւրք ինոսուն տարեկան ծեր կինարմատ մահուան ժամանակ հայ քահանայ է պահանջում, որ խոստովանի, հաղորդվի, և իր որդուցը յայտնում է, որ ինքն հայ քրիստոնեայ է։ Այսպիսի կենդանի փաստեր հետաքրքիր մարդը կարող է ամեն քայլափոխում տեսնել։ Ի վերջոյ տեղիս հայերն անվերադառնալի կուլ են գնացել և ձուլվել թիւրքութեան հետ։ Վրացիք ևս թէև կուլ են գնացել, դէթ իրանց մայրենի լեզուն մինչև այսօր պահած են. սորա պատճառը պէտք է որոնել Վրաստանի երկար ժամանակ անկախ մնալում, որոնք իբրև դրացի և արիւնակից միշտ յարաբերութիւն են ունեցել միմեանց հետ։

Դաւառիս բնակիչները առանց բացառութեան պարապում են երկրագործութեամբ։ Քաղաքի մէջ միայն կարելի է դտնել մի քանի մանրավաճառներ։ Վաճառականութիւնը գտնվում է ինչպէս թիւրքի տիրապետութեան ժամանակ, նոյնպէս այսօր, մի քանի արտուինցի հայ-կաթոլիկների ձեռքում։ Իսկ մի քանի տեղին անհրաժեշտ արհեստներից մեծ մասը նոյնպէս գտնվում է հայերի ձեռքում։ Այդ հայերը բոլորը ժամանակաւոր բնակիչներ են, գլխաւորապէս արտուինցի և մանաւանդ ախալցխացի, որոնց մասին յետագայ նամակներիս մէջ կը ծանուցանեմ ձեզ։

Երկրագործութիւնը, մարդկային ազգի այս շահաւետ բնական արհեստը Ասիայում, ինչպէս ամեն տեղ, նոյնպէս այստեղ գտնվում է վերջին ստոր դրութեան մէջ, բայց այսուամենայնիւ Արտահանը հարուստ է իր ցորենի և գարու ամբարներով, որովհետև սորա հողերը թէև անջրդի, բայց խիստ բերրի և արգաւանդ են։ Համեմատելով երկրագործ աշխատող դասը հայ երկրագործի հետ, պէտք է ասել, անհամեմատ ստոր են այստեղացիք աշխատութեան և ժրագործութեան մէջ։ Մենք կը հաստատենք, որ մի ժիր հայը սոցա տասի չափ գործ աեսնող է իր արհեստի մէջ։ Բայց հողերի առատութիւնը պարդևում է մէկին հարիւրապատիկը։ Երևակայիր, պատուելի ընթերցող, որ հայ երկրագործ (Ռուսաստանի Հայաստանում) հինգ տնոորը, որ կունենայ մօտ երեսուն ժիր մշակների ուժեղ բազուկներ այնքան փող ունեն, որքան այստեղ մի ծոյլ, անհոգ թիւրք, որ երկու թոյլ ձեռքերից աւելի ոչինչ ունի։ Հող, կրկնում է ծեր երկրագործ հայը և հողի հարց համարում է իր համար կեանքի և մահու խնդիր։ Ո՞ւմ յայտնի չէն այն սպանութիւնները, սարսափելի կռիւները, վէճերը, խռովութիւնները, որոնք անընդհատ կատարվում են գիւղացւոց մէջ հողի համար։ Մեր հողագործը ունի դարձեալ այն հողերը, որոնք իր պապի օրով նոր գաղթականութեան միջոցին իրան էր յանձնված. դեռ չէնք մոռացել այս վերջին տարիներում երկրաչափների այս ու այն գիւղի հողերի խուզոցը։ Ահա ամբողջ կէս դար է, որ միշտ մի և նոյն հողն է ամեն տարի ցանվում։ Չէ՞ որ հողն էլ հանգստութիւն կուզէ։ Մի թէ այդ չէ գլխաւոր առիթը, որ նշանաւոր պատմական Շիրակը այժմ համարեա թէ ամուլ է, և չէ տալիս առաջուայ բերքը։ Աւելացրու այս հանգամանքի վրա, թէ որքան աճել է այդ գերդաստանը յիսուն տարվայ ընթացքում։ Վերջ ի վերջոյ առաջին և վերջին վիճակագրութիւնը, իսկոյն կը համոզվես, որ արդարև անհնար է այդպիսի սակաւ հողով ապրել։ Ո՞ւմ յայտնի չէ, որ հայ երկրագործը դեռ 16 տարեկան հասակում ունենում է որդի։

Այս ամեն փաստերից պէտք է համոզվել, որ եթէ թոյլ տրուի երկրագործին աւելի ընդարձակ հող ունենալ, նախ՝ երկիրը հանգստանալով՝ աւելի կը պարարտանայ, առատ հունձ կը տայ, որով թշուառութիւնների մի մասը կը պակասի։ Երկրորդ՝ կը սակաւանայ այն դատաստանական անտանելի լեռնակուտակ գանգատների խնդիրների դէպը, որ այսօր հազարաւոր դատաւորներ գիշեր ու ցերեկ աշխատում են պակասացնելու։ Եւ երրորդ՝ եթէ չարունակվեցաւ հողի անբաւարարութեան խնդիրը մեր կողմերում, կարճ միջոցում հացի մեծ կարօտութիւն կը լինի մեզանում։

Նոր առնված երկրներում այնքան ցանելու հողի քանակութիւն է պարունակվում, որ եթէ հայ ազգաբնակութեան այն մասը, որ հողի անհրաժեշտ սղութիւնից ստիպված գաղթում է այս սահմանները, եթէ հազարաւորներ ևս գաղթեն, դարձեալ կը բաւականանայ։ Մի ուրիշ հարց էլ կայ, որ ակամայ նամակիս մէջ է մտնում։ Հայ գիւղացին կարծես այստեղի բնութեան հարազատ զաւակն է, նա լաւ է ճանաչում տեղիս հողի յատկութիւնը և նորա գործադրութիւնը, քան թէ մեր այժմեան հոգաները.—բայց փոյթ չէ։ Տակաւին կարելի է յոյս ունենալ, որ ապագան մեզ է պատկանում։ Միայն հաստատուն և տոկուն աշխատանք պէտք է։ Իմ կարծիքով, բաւական չէ միայն կրթել միտքը, ազնուացնել հոգին, պէտք է կրթել և մարմինը։ Դու, ինքդ, Վարդան, նկատած կը լինես, թէ այստեղի մանուկները մինչև որ աստիճան դանդաղկոտ են, մինչև որ աստիճան ծանրաշարժ են։ Պէտք է ամրացնել նրանց մկանները, պէտք է կաղդուրել նրանց ջղերը։ Այս կէտից, մարմնամարզութիւնը մեր դպրոցների մէջ պէտք է ընդունէ նպատակայարմար ձև և կերպարանք. նա պէտք է քաջութիւն ազդէ մեր մանուկների մէջ և պէտք է ամրացնէ նրանց թուլացած սրտերը....

—Ես քեզ մի ուրախալի բան պիտի պատմեմ, Վարդան,—այսօր տեսութիւն ունեցայ մի քանի քրդերի հետ, խօսում էի նրանց դպրոցի և կրթութեան օգտաւէտութեան մասին։ Մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նրանք ցոյց տուեցին ամենատեսակ պատրաստակամութիւն, յայտնելով, թէ սիրով կը յանձնեն իրանց որդիները հայոց դպրոցներում, երբ ուսումը այդքան լաւ բան է։ Նրանց խօսակցութիւնից երևում էր, թէ իրանք էլ շատ դոհ չեն, որ իրանց որդիները աւազակներ են լինում։ Եւ իրաւ, այդ ժողովուրդը ինչով է մեղաւոր, որ մնացել է վայրենի, որ իր ապրուստը որոնում է աւազակութեան և մարդասպանութեան մէջ։ Մեղաւորը մենք ենք, որ մինչև այսօր չաշխատեցինք կրթել նրանց։ Մեր սեպհական շահերը պահանջում էին անել այդ։ Եթէ ցանկանում ենք ազատ մնալ դաղանների կատաղութիւնից, պէտք է աշխատենք նրանց ընտանեցնել, պէտք է աշխատենք նրանց վարժեցնել աւելի խաղաղ և աւելի քաղաքակրթված կեանքին։ Թուրքիան հոգ չէ տանում քրդերի կրթութեան մասին, և այդ շատ հասկանալի է, որովհետև քրդի վայրենութիւնը աւելի նպաստաւոր է նրան։ Բայց մենք պէտք է հոգ տանենք, որովհետև վնասը մեզ է հասնում։ Մենք չենք դիպչի նրանց կրօնին, մենք միայն կը կրթենք նրանց։ Այնուհետև «ջուրը իր բնական ճանապարհը կը գտնէ....»

(Կը շարունակվի)

լակած տուն բերեցին և խեղճ տղան երկու օրից յետոյ մեռաւ։

—Տիրացու Սիմոնը ինչով էր մեղաւոր. առանց ծեծի երեխան ինչ կը սովորի։

Այս խօսակցութիւնները առանց պատճառի չէին։ Պ. Սալմանը նոյն օրերում բանակցում էր գիւղացիների հետ երկու դպրոցներ բացանելու, մէկը աղջիկների համար, միւսը տղաների համար։ Նա խոստանում էր, թէ ինքը վարժապետներ բերել կը տայ և նրանց դաւակները կը սովորեն բոլորովին ձրի և մինչև անգամ գրքերը և այլ ուսումնական պարագայքը կը ստանան առանց փողի։ Բայց ինչ որ ձրի է, գիւղացու համար կասկածաւոր է։ Այդ պատճառով մեծ աշխատութիւն պէտք էր գիւղացիներին համոզելու համար, որոնց առաւելապէս բարկացնում էր օրիորդաց դպրոցը։ Ժողովուրդը սովորած լինելով կրթութիւնը տէրտէրների և տիրացուների ձեռքից ընդունել, ոչ միայն օտարոտի և խորթ էր համարում, այլ մինչև անգամ մեղք էր համարում իր զաւակների դաստիարակութիւնը մի այնպիսի մարդու ձեռքը յանձնել, որ ժամ չէր գնում, որ չարական չէր ասում, որ, ինչպէս լսում էին, պաս էլ չէր պահում։

Ներսէնի Խաչօն, որ միւս բոլոր խորհուրդների մէջ հակառակ էր պ. Սալմանին, դպրոցների վերաբերութեամբ համաձայնվեցաւ նրա հետ։ Որպէս գիւղի տանուտէրը և գլխաւորը, նա կարողացաւ համոզել գիւղացիներին, և պ. Սալմանին տուեցին մի կտոր գետին, որի վրա նա յարմար էր համարում դպրոցների շէնքը կառուցանել։ Գործը արդէն սկված էր. հիմքը փորված էր։ Յանկարծ մի փոթորիկ բարձրացաւ և մի առաւօտ տեսան, որ գիւղացիները գիշերով հաւաքվել և հիմքը հողով լցրել էին։ Այն օրը գիւղացիներից ոչ ոք չեկաւ բանելու, չը նայելով, որ պ. Սալմանը օրական վարձը աւելացրեց։

Ի՞նչ էր պատահել։

Որպէս վերևում կանանց խօսակցութիւններից նկատեցինք, այդ գիւղում կար Սիմոն անունով մի տիրացու, որը մի և նոյն ժամանակ վարժապետութիւն էր անում. այսինքն՝ ձմեռը հաւաքում էր երեխաներին մի դոմի մէջ, սաղմոս, ժամագիրք և դրանց նման գրքեր էր կարդացնում, բայց գարունքին, երբ գիւղական աշխատութիւնները սկսվում էին, իր աշակերտներին արձակում էր, որոնք մինչև աշնան վերջը դպրոցի երես չը տեսնելով, ինչ որ սովորել էին, բոլորը մոռանում էին։ Այդ տիրացու Սիմոնը գիւղի ծխատէր քահանայի՝ տէր Մարուքի փեսան էր, մի յարաժամ արբեցող, բայց մի և նոյն ժամանակ սաստիկ խռովարար մարդ էր նա։ Նոր դպրոցների շինութիւնը նա իր շահերին վնասակար գտաւ և զրդռեց իր աներոջը խափանել գործը։

Մի խօսք բաւական էր գիւղացիների մոլեռանդութիւնը բորբոքելու և գործը խափանելու համար։ Քահանան եկեղեցում պ. Սալմանի մասին, իր քարոզի մէջ, յայտնեց ժողովրդին, որ այդ մարդը «ֆարմասոն» է, հայոց Աստծուն չէ պաշտում և բոլոր երեխերքին հաւաքից կը հանէ։ Նա աւելացրեց, որ աղջիկներին կարդացնելը մեղք է, որ Սղոմոն իմաստունը և Յովհաննէս մկրտիչը, կնիկներին անիծել են, որովհետև մի կին Յովհաննէս մկրտչի գլուխը կարել տուեց։ Յետոյ սուրբ գրքից շատ փաստեր բերեց, որ Սամսոն մարդասէր (?) մահուան պատճառն էլ մի կին դարձաւ, Աղամին էլ Եւան խաբեց և դրախտից դուրս գցել տուաւ, մի խօսքով, իր քարոզի մէջ զանազան այս տեսակ վկայութիւններ բերելով, տէր հայրը հաստատեց, որ աղջիկներին կարդացնելը վտանգաւոր է, որովհետև նրանք շատ բան կը սովորեն և սատանայ կը դառնան։

Բայց տիրացու Սիմոնը մեծ հեղինակութիւն ունէր գիւղի կանանց հասարակութեան մէջ. նրանց համար զանազան կախարդական թղթեր էր գրում, հմայում էր, գուշակութիւններ էր անում, և այսպիսով գրաւել էր նրանց համակրութիւնը։ Կնիկները աւելի զրգռեցին իրանց ամուսիններին, որ տիրացուին օգնեն, որ նրա հացը չը կտրվի։

Քահանան և տիրացու Սիմոնը իրանց յարուցած խռովութիւնների մէջ մեծ օժանդակութիւն գտան Թոմաս էֆէնդուց, որը սաստիկ հակառակ էր դպրոց, դպրութիւն և ուսում կոչված բաներին։ Բայի դրանից, տիրացուն նրա անվարձ գրագիրն էր, գրում էր կապալառուի հաշիւները, և հունձքի ժամանակ նրա զափթիաների հետ գիւղից գիւղ մանն էր գալիս և հաւաքում էր գիւղացիների մրջակութեան բերքի տասանորդները։

Այդ բոլորը մեծ հոգսեր պատճառեցին բարեսիրտ ծերունի Խաչօին, բայց ինաւ չը կարողացան խախտել պ. Սալմանի հաստատամտութիւնը։ Երեկոյեան տուն դառնալով, նա ասաց Վարդանին.

—Ես այդ անպիտանների հետ միսիոնարի պէս պիտի վարվեմ։ Միսիոնարը ինչ ժողովրդի մէջ որ մտնում է, նրա առաջին հակառակորդները լինում են կարդացողները և հոգևորականները։ Բայց մի և նոյն ժամանակ նրա առաջին հետևողները դառնում են նոյն մարդիկը, որ սկզբում հակառակում էին։ Միսիոնարը յանձնում է նրանց զանազան գործեր, լաւ ևս է ասել՝ ոչինչ գործ չէ յանձնում, միայն առձիկներ է տալիս։ Այսպիսով նոր աղանդը հալածող Պողոսները դառնում են նրա ամենամոլեռանդ պաշտպանները։

—Այդ իրաւ է, պատասխանեց Վարդանը,—ինչ ես ուզում անել։

—Պէտք է գործնական լինել, ասաց պ. Սալմանը մի առանձին անձնավստահութեամբ,—պէտք է հասկանալ, թէ ինչով են գրաւվում մարդիկ։ Ինձ հետաքրքիր է գիտենալ, թէ այդ յիմար տիրացուն որքան շահ ունէր իր աշակերտներից. ես կառաջարկեմ նրան կրկնապատիկը ստանալ ինձանից և իմ դպրոցներում մի պաշտօն վարել, այսինքն ոչինչ գործ չը կատարել։ Հաւատացած եմ, որ այս առաջարկութիւնից յետոյ, առաւօտեան ինքն կը զայ, բանը և բրիչը կը վեր առնի և իմ բանուորների հետ կը սկսէ աշխատել դպրոցների շէնքը կառուցանելու համար։

—Ես էլ այսպէս եմ կարծում, պատասխանեց Վարդանը,—բայց տէրտէրի բերանին էլ պէտք է մի փոքր իւղ քսել։

—Այդ էլ կանեմ։

Զը նայելով այնօր պատահած անախորժութիւններին, պ. Սալմանը սովորականից աւելի ուրախ էր։ Գործի սկզբնաւորութեան անաջողութիւնները բորբոքել էին նրա եռանդը, իսկ ապագայի պայծառ յոյսերը լցրել էին նրա սիրտը մի անսահման բերկրութեամբ։

—Գիտես, Վարդան, որքան բախտաւոր; որքան ընդարձակ ապագայ է խոստանում մեզ դպրոցը։ Նա կը տայ մեզ բոլորը ինչ որ մենք ցանկանում ենք։ Նա, միայն նա կը բուժէ մեր դարևոր վէրքերը և կը պատրաստէ նոր սերունդը մի առողջ և թարմ կեանքի համար։ Մեր նախորդների դարեւոր անգործութիւնը թողեց մեզ համար, իրաւ է, շատ աշխատանք։ Նրանք կանխապէս չը հեշտացրին մեր այժմեան հոգսերը.—բայց փոյթ չէ։ Տակաւին կարելի է յոյս ունենալ, որ ապագան մեզ է պատկանում։ Միայն հաստատուն և տոկուն աշխատանք պէտք է։ Իմ կարծիքով, բաւական չէ միայն կրթել միտքը, ազնուացնել հոգին, պէտք է կրթել և մարմինը։ Դու, ինքդ, Վարդան, նկատած կը լինես, թէ այստեղի մանուկները մինչև որ աստիճան դանդաղկոտ են, մինչև որ աստիճան ծանրաշարժ են։ Պէտք է ամրացնել նրանց մկանները, պէտք է կաղդուրել նրանց ջղերը։ Այս կէտից, մարմնամարզութիւնը մեր դպրոցների մէջ պէտք է ընդունէ նպատակայարմար ձև և կերպարանք. նա պէտք է քաջութիւն ազդէ մեր մանուկների մէջ և պէտք է ամրացնէ նրանց թուլացած սրտերը....

—Ես քեզ մի ուրախալի բան պիտի պատմեմ, Վարդան,—այսօր տեսութիւն ունեցայ մի քանի քրդերի հետ, խօսում էի նրանց դպրոցի և կրթութեան օգտաւէտութեան մասին։ Մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նրանք ցոյց տուեցին ամենատեսակ պատրաստակամութիւն, յայտնելով, թէ սիրով կը յանձնեն իրանց որդիները հայոց դպրոցներում, երբ ուսումը այդքան լաւ բան է։ Նրանց խօսակցութիւնից երևում էր, թէ իրանք էլ շատ դոհ չեն, որ իրանց որդիները աւազակներ են լինում։ Եւ իրաւ, այդ ժողովուրդը ինչով է մեղաւոր, որ մնացել է վայրենի, որ իր ապրուստը որոնում է աւազակութեան և մարդասպանութեան մէջ։ Մեղաւորը մենք ենք, որ մինչև այսօր չաշխատեցինք կրթել նրանց։ Մեր սեպհական շահերը պահանջում էին անել այդ։ Եթէ ցանկանում ենք ազատ մնալ դաղանների կատաղութիւնից, պէտք է աշխատենք նրանց ընտանեցնել, պէտք է աշխատենք նրանց վարժեցնել աւելի խաղաղ և աւելի քաղաքակրթված կեանքին։ Թուրքիան հոգ չէ տանում քրդերի կրթութեան մասին, և այդ շատ հասկանալի է, որովհետև քրդի վայրենութիւնը աւելի նպաստաւոր է նրան։ Բայց մենք պէտք է հոգ տանենք, որովհետև վնասը մեզ է հասնում։ Մենք չենք դիպչի նրանց կրօնին, մենք միայն կը կրթենք նրանց։ Այնուհետև «ջուրը իր բնական ճանապարհը կը գտնէ....»

(Կը շարունակվի)

որ և է այլասահման, ինչպէս ռուս և այլն։ Իսկ այժմեան գաղթական ռուսները, կամ մալականները, որոնք այժմ այս երկրներումն են, համարեա յուսահատված են, որովհետև սաքա սովոր են խոտերի մեծ դէզեր ունենալ անասուններ պահելու համար, այն ինչ այս երկիրները դոցա այդ պէտքերը լցուցանելու չափ անկարող են։ Սոցա մի գլխաւոր արհեստն էլ համարվում է ծանրութիւնների տեղափոխութիւնը — քրէհտարութիւն, բայց տեղիս վաճառականութիւն չը լինելու և ճանապարհների անյարմարութիւնը փակում է աշխատանաց այդ աղբիւրը։ Վերջ, առաջ, ինչպէս նկատվում է, նոր գաղթականները կրկին վերազաղթելու են իրանց հայրենիքը։

Հ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Մարտի 25-ին

Մարտի 19-ին, երբ մենք, Ալէքսանդրապօլի հայ-աւետարանականներս հաւաքված էինք մեր աղօթատան մէջ և աղօթում էինք, յանկարծ փողոցի մի քանի սրիկաները սկսեցին քարեր գցել մեր աղօթատան վրա, պատուհանների ապակիները կոտրելով և բարձրաձայն հայհոյելով հայ-աւետարանականներին, մեր հաւատն ու կրօնը, այնպիսի բառերով, որ անհնարին է տպագրել։

Շատերը մեր եղբայրներից վախեցան, և միւս օրը, երբ կրկին հաւաքվեցանք, որպէս զի մեր միւս հայաբնակ քաղաքների հայ աւետարանականների օրինակին հետևելով, մեր կարողութեան չափ գումար ժողովենք և ուղարկենք «Մշակի» խմբագրութեանը, Վանի մեր սովալ եղբայրներին հասցնելու համար, շատերը մեր եղբայրներից վախից չը ներկայացան աղօթատուն։

Մեր համաղաւանների լուսաւորչական հայերից մի քանի անկարգ անձինք անդադար հայհոյում են փողոցում, քարեր են գցում նրանց վրա, խանութների մէջ կամենում են ծեծել։ Չը գիտեմ, մենք ինչ ենք արել մեր լուսաւորչադաւան եղբայրներին, որ նրանք այդպէս անողորմ վարվում են մեզ հետ։ Փողոցային այդ անկարգութիւնների ժամանակ բաղդաւորապէս ներկայացաւ ոստիկանութիւնը և մեզ պաշտպանեց յարձակվողների դէմ։ Ոստիկանութեան պաշտօնեան ակտ կազմեց և մենք ստիպված ենք դանգատվել դատարանին։ Մենք այդ տեսակ հալածանքներից այստեղ հանգստութիւն չունենք և դուցէ հայ-աւետարականները կը ստիպվեն գաղթել Ալէքսանդրապօլից Կարսի նահանգը, որպէս զի հանգստութիւն ունենան։

Մթթէ դա խելացի վարմունք է լուսաւորչականների կողմից, որ նրանք թոյլ են տալիս իրանց համաղաւան մի քանի փողոցային անձինքներին մեզ այս տեսակ անողորմ կերպով հալածել։

Մեր յոյսը միայն մարմնաւոր իշխանութեան վրա է, և նոյնպէս «Մշակի» վրա, որ անաչառ կերպով գիտէ պաշտպանել ամեն նեղեալներին և հաւասար աչքով է նայում իր բոլոր հայրենակիցների, հայերի վրա, ինչ դաւանութեան և պատկանելին նրանք։

Այժմ, երբ մենք հայերս, պէտք է բոլորս էլ միանանք և միահամուռ կերպով գործենք, օգնելով մեր սովալ եղբայրներին Թիւրքաց Հայաստանում, մթթէ յարմար ժամանակ է նորից սկսել միջնադարեան հալածանքները հայ-աւետարանականների դէմ...

Այդ մասին երկարաբանել աւելորդ եմ համարում։

Տխրալի է մեր դրութիւնը։ Մթթէ Ալէքսանդրապօլի հայ-լուսաւորչական հասարակութեան բարեմիտ մասը մեզ չի պաշտպանի, մանաւանդ այդ տեսակ ազգային ճգնաժամի ժամանակ, արդեանների և մոլեռանդների հալածանքների դէմ։

Հայ-աւետարանական

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Մարտի 14-ին

Ուղարկում եմ մի յօդուած, որոյ նպատակն է բացատրել ընթերցող հասարակութեանը Ռուսաստանի արևելքի հետ մինչև այժմ ունեցած յարաբերութիւնները և այն նախագաղափարը լրագրի և օրագրի մասին, որ պէտք է մօտ ժամանակներս հրատարակէ ակադէմիկոս պ. Պրուդնիկովը։ Ունենալով միջոց տեսնել և խօսել այդ վերջինի հետ և նոյնպէս իմանալ նորա մտքերը, խոնարհաբար խնդրում եմ, այդ յօդուածը տպագրել ձեր լրագրի թերթերից մէկում։

Մեզ, յայտնի է, որ շատ անգամ ռուս գիտնականների մեծ մասը ցաւում են իրանց հայրենակիցների անտարբեր մնալու վրա դէպի արևելեան ազգերի պատմութիւնը և գրականութիւնը, դէպի նոցա կեանքը, որոնք կարող էին լիաբատ և հետաքրքիր նիւթ տալ գիտութեանը և ոչ պակաս օգուտ առնտրին Ռուսաստանի մէջ։ Բայց տարաբաղդաբար մինչև այժմ ռուս հասարակութիւնը Արևելքի վրա այնպիսի կարծիքներ ունի, ինչպէս ունեցել է շատ առաջ։ Արևելքը մինչև այժմ մնացել է terra incognita։ Բոլոր հարկաւոր տեղեկութիւնները ռուս հասարակութիւնը քաղում է այլազգի աղբիւրներից և շատ անգամ ընկնում է այնպիսի ծանրակշիռ սխալմունքների մէջ, որ չէ կարողանում ուղղել, չունենալով պատշաճաւոր հանգամանք քննելու և եզրակացութիւններ անելու համար. մինչդեռ ռուս գիտնականի համար Արևելքը ուսումնասիրելու միջոցը՝ ընդարձակ և հեշտ է քան թէ ուրիշների համար։ Առաջինը՝—աշխարհագրական դրութիւնը—սահմանակցութիւնը Ռուսաստանի արևելեան ազգերի հետ, երկրորդ՝ քաղաքական դրութիւնը—հպատակութիւնը մեծ մասի արևելեան ազգերի ռուսաց տէրութեանը պէտք է լինեն ռուս գիտնականի համար ամենահեշտ միջոց ուսանելու և մշակելու արևելեան գիտութիւնները։ Ռուս հասարակութիւնը չը նայելով իր քաղաքակրթութեանը հետաքրքիր է մնում իր սիրած Եւրոպային աւելի, քան թէ արևելքին և նորա ազգերին, նորա պատմութեանը, որի մշակումը անչուշտ մեծ օգուտ կարող էր բերել գրականութեանը։ Օրինակի համար Հայաստանը, նորա պատմութիւնը և հայոց գրականութիւնը մթթէ հետաքրքիր չէ կարող լինել ռուս գիտնականին։ Վերջին ժամանակները, երբ գիտութիւնների մէջ համարեա առաջին տեղերից մէկը բռնում է իր նիւթով հնդկա-եւրոպական ազգերի բաղդատական լեզուագիտութիւնը, եւրոպացի գիտնականների մեծ մասը իր ուշադրութիւնը դարձրեց հայոց լեզուին, որի մէջ կայ մեծագոյն նիւթ դժուար բացատրութիւնների համար. թողնենք հայոց լեզուն, որ իր գրականութեամբ համարեա յետ չէ մնացել ուրիշ ասիական լեզուներից, ինչպէս հնդկաց, պարսից կամ եբրայեցւոց, եւրոպացիք պարապում են օսերի և վրաց լեզուներով, չուրանալով նոյնպէս և նոցա օգուտը բաղդատական լեզուագիտութիւնը մշակելու համար։

Այսպէս ահա անցնում են տարիներ, դարեր,— ճշմարիտ է ժամանակ առ ժամանակ երևում են Ռուսաստանի մէջ յօդուածներ Արևելքի մասին, բայց կարդացող քիչ են գտնում, որովհետև ճիշտ տեղեկութիւններ չեն տալիս արևելեան ազգերի կեանքից։ Եթէ մինչև հիմա ոչինչ չէ արած և ոչինչ չէ անվում յօգուտ գիտութեանը, նոյնպէս և ոչինչ օգուտ չէ քաղել և առնտուրը, ինչպէս կարող է տեսնվել ստատիստիկական ցուցակներից։ Ռուսաստանը չունի մի այնպիսի օրագիր կամ լրագիր, որով կարելի լինէր ծանօթացնել հասարակութիւնը Արևելքի հետ։ Ճշմարիտ է, հրատարակվում են օրագրեր և լրագրեր, որոնք պարունակում են իրանց մէջ հետաքրքիր և օգտակար յօդուածներ, բայց տարաբաղդաբար դրա անհասկանալի են ռուս հասարակութեանը հայերէն կամ ուրիշ լեզուներով գրուածներ լինելով։

Ուստի՝ տեսնելով այսպիսի մի մեծ թերութիւն ռուսաց գրականութեան մէջ, մի ուսումնական, անդամ մի քանի եւրոպական ակադեմիաների ակադեմիկոս պ. Մ Պրուդնիկովը կամենում է յանձն առնել այդ բարի գործը։ Նա մտադիր է ծանօթացնել ռուս հասարակութիւնը ժամանակակից անցքերին արևելքում, ծանօթացնել այն անձանց կենսագրութեանը, որոնք երևելի են հանդիսացել թէ եկեղեցական, թէ ժողովրդական կեանքում, թէ ծառայութեան մէջ, հաղորդել հասարակութեանը արևելեան ազգերի վիպագրութիւնը, երգերը, առակները, առածները և այն և այն։

Այդ լրագրի և օրագրի մէջ տեղի կունենան այն դժբաղդ դրութիւնները և կեանքի հարուածները, որ կրել են և կրում են արևելեան ազգերը, հայոց ազգի պատմութիւնը, նորա իրաւունքները և յոյսերը, յօդուածներ հայոց և վրաց դիցաբանութիւնից։

Ահա այս է այդ մտադրած պ. Պրուդնիկովի օրագրի և լրագրի պրոգրամման։ Օրագրի հետ հրատարակվող լրագիրը կը դուրս գայ 3 լեզուներով՝ Հայերէն, Ռուսերէն և Ֆրանսերէն։ Լրագիրը կը պարունակէ իր մէջ հեռագիրներ, հետազօտութիւններ քաղաքական անցքերի մասին Արևելքում, զանազան նկատողութիւններ ժամանակակից հարցերի, զանազան ազգերի մամուլի կարծիքները, ժամանակագրութիւններ գրականական, թատրոնական, գեղարուեստական և ուրիշ հարցեր, և յայտարարութիւններ։ Ունենալով թղթակիցներ աւելի քան 20 արևելեան քաղաքներում պ. Մ. Պրուդնիկովը համոզված է, որ պակասութիւն չի լինի նիւթական միջոցներում, չի մնայ սերեռս դէպի իր կարդացողները և չի զրկվի ժողովրդի համակրութիւնից։

N. N.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 28 մարտի

Պատուելի խմբագիր, խնդրենք ընդունէք յօդուտ Վանի սովատանջների 262 բուբլի 55 կոպէկը ժողոված Թիֆլիսի ծածկած փողոցում և ուղարկէք որտեղ հարկն է և տպէք այս նուիրատուների ցուցակը ձեր պատուական լրագրի մէջ։

Եպոր Դեմուրեանց 10 ր., Լիզա Դեմուրեանց 10 ր., Աննա Բերինեանց 5 ր., Յովհաննէս Կուկուջանեանց 10 ր., Հանգուցեալ Սալոմէ Դեմուրովի հոգւոյ համար 5 ր., Հանգուցեալ Օհաննէս Դեմուրովի հոգւոյ համար 5 ր., Դաւիթ Կուկուջանեանց 5 ր., Հէզինէ Կուկուջանեանց 5 ր., Ալէքսանդր Կուկուջանեանց 5 ր., Հանգուցեալ Աղան Կուկուջանեանցի հոգւոյ համար 10 ր., Նատալիա Կուկուջանեանց 3 ր., Մարթայ Կուկուջանեանց 1 ր., Մարիամ Իւղբաշեանց 5 ր., Սիմէօն Խարազեանց 3 ր., Աղալօ Հախվերդեանց 1 ր., Հանգուցեալ Միխայէլ Բերինովի հոգւոյ համար 5 ր., Եղբայք Ալէքսանեանց 3 ր., Խէչօ Պողոսով 1 ր., Ալէքսի Շաքարով 1 ր., Գէորգ Թաթուլեանց 3 ր., Շաքար Նուրալով 1 ր., Иванъ Метревеловъ 10 к., Աշոտիս Բաղդասով 1 ր., Գիգոլ Տէր-Ստեփանով 3 ր., Աղալօ Միրիդոլեանց 1 ր., Վասիլ Սիրինով 20 կ., Գրիգոր Մերաբեանց 5 ր., Դարչօ Պէտրուսով 3 ր., Պողոս Լազրիչ Տէր-Պողոսով 1 ր., Դաւիթ Մէբուրնութով 5 ր., Իսակ Նարիմանով 5 ր., Վանս Սուլիկով 3 ր., Ալէքսանդր Զանջուղազով 5 ր., Զաքար Տէր-Առաքելով 3 ր., Գրիգոլ Փարսաղանով 1 ր., Մէլքօ Դանդուրով 3 ր., Իվան Գրիգուրով 15 կ., Ալէքսանդր Պովիժեանց 1 ր., Սէրգէյ Աբրամիչ Սարգսեանց 1 ր., Անոյշ ոմն 10 կ., Եփրեմ Առովմեանց 3 ր., Անոյշ ոմն 5 կ., Իոսէփ Դոլմազով 50 կ., Սերգէյ Դոփիով 2 ր., Մօսէս Վարթանով 1 ր., Կարապետ Դոլմազով 1 ր., Սազանդար Ալէքսի Դանդուրով 1 ր., Միխէիլ Դոլմազով 1 ր., Ստեփան Մատինով 20 կ., Եպոր Սանթրուսով 1 ր., Գէորգ Ղազարով 50 կ., Եպոր Նավթիկով 1 ր., Ալէքսանդր Սադարէլով 50 կ., Արտէմ Էլիազով 50 կ., Դաւիթ Մուրադով 1 ր., Սօլոմոն Փիղինով 1 ր., Միխակ Շարիբարաչիկով 50 կ., Եղիայ Պողոսեանց 1 ր., Եպոր Կոնդախսազով 1 ր., Փաշայ Փաչոէվ 20 կ., Սոլոմոն Անտոնով 20 կ., Գէորգ Մովսէսով 1 ր., Վասոյ Ամիրով 3 ր., Ստեփան Դէմուրով 3 ր., Պետրոս Շահրուդաղեանց 1 ր., Արտէմ Ղաջարդուղով 1 ր., Արտէմ Փարեմուզով 3 ր., Միխէիլ Վարթանով 3 ր., Արտէմ Տէր-Օհաննէսով 1 ր., Ստեփան Գուլեանց 3 ր., Սիկօ Ռոստոմով 1 ր., Իովանէ Բայսողլով 1 ր., N. N 3 ր., Գաբօ Շաղինով 5 ր., Ափրիամ Օսէփով 3 ր., Եպոր Տէր-Կարապետով 2 ր., Գրիգոլ Արէշով 3 ր., Արշակ Ծովիանով 3 ր., Յովհաննէս Ծովիանեանց 5 ր., Նիկողայոս Նիկողոսեանց 1 ր., Հայ ոմն 1 ր., Հաղարապետ Սուլխանեանց 1 ր., Սոլոմոն Կարաչով 1 ր., Սարգիս Յարութիւնեանց 1 ր., Егоръ Кузановъ 1 ր., Գրիգոլ Սարուխանով 10 ր., Ալէքսանդր Մանդէնով 1 ր., Արտէմ Սարուխանով 5 ր., Եսէփ Սոլոմոնով 1 ր., Կարապետ Մութաֆեանց 5 ր., Հայ ոմն 1 ր., Նատալիա Բոտինեանց 3 ր., Նիկալայ Աւետիսեանց 2 ր., Միքայէլ Խօջափարուխով 1 ր., Ավաք Թարխանով 1 ր., Նիկալայ Փարեմուզով 2 ր., Նիկալայ Ղորղանով 1 ր., Արտէմ Արութիւնով 3 ր., Սարգիս Միքայէլեան Վարդանեանց 3 ր., Ստեփան Ջիջօէվ 1 ր., Պավէ Ուլանցով 3 ր., Մարիամ Կուսիկեանց 5 ր., Կատարինէ Ասլանեանց 3 ր., Հայ Տիկնայք 3 ր. 40 կ։ Գումարն է 262 ր. 55 կ։

Ե. Դէմուրեանց
Դ. Կուկուջանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք դոկտոր Անդրէաս Արծրունու մի նոր գիտական բրոշիւր։ Դա մինէրալօգիական մի հետազօտութիւն է որ պ. Արծրունին արել էր Ուրալի վրա։ Յօդուածը այսպիսի վերնագիր ունի. «Eine kupferkiespseudomorphose von Nishny-Tagil, am Ural.» von Andreas Arzruni.

—

Ստացանք ԴԷՐԲԷՆԴԻՑ 260 բուբլ, որ նուիրատուութեամբ հաւաքվեցաւ այդ քաղաքում յօգուտ Վանի սովելոց։ Թէև նամակում ասված էր, որ նուիրատուների ցուցակն էլ նամակով ուղարկվում է, բայց նամակում ոչինչ ցուցակ չը կար, այլ գրած էր սխալմամբ սպիտակ թուղթ։ Ուրեմն խնդրում ենք պ. Յ. Գալստեանից որ նուիրատուների ցուցակը ուղարկի մեզ։

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ պ. Գասպար Ամիրեանց ուղարկել է մեզ 5 բուբլ հետևեալ նամակով. «Այսօր մտաւ ինձ մօտ մի ռուս տիկին, Նաստասիա Նիկոլաեվնա Իվանովա, որ լսելով Վանի սովալուկ հայերի թշուառ դրութեան մասին, շարժվելով մարդասիրական զգացմունքից, չը նայելով որ ինքն տիկինն էլ հարուստ չէ, յանձնեց ինձ 5 բուբլ, որպէս զի ուղարկեմ ուր հարկն է։ Եւ ահա ուղարկում եմ ձեզ այդ փոքրիկ գումարը։»

—

Գօղբիրուա եղբայրների ԹԻՖԼԻՍԻ ֆրանսիական ցիրկի վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել որ հինգշաբթի, ապրիլի 3-ին, լինելու է Գոֆմանի ընտանիքի բենեֆիսը։ Փոքրիկ Դօրա Գոֆման կատարելու է եապօնական խաղեր, որոնք դեռ ևս տեսնված չեն Թիֆլիսում։

—

Մեզ խնդրում են յայտնել որ ԲՕՐԺՕՄՈՒՄ ծախվում է մի փոքրիկ, բոլորովին նոր տուն, իր դեղինով։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ Թիֆլիսում, «Կովկաս» հիւրանոցում, № 28 սենեակի մէջ կենող պարոնից։

—

Ապրիլի 1-ին ուղարկեցինք դարձեալ 2000 բուբլ յօգուտ Վասպուրականի սովատանջների։ Այդ գումարը հեռագրով փոխադրեցինք Կ. Պոլսի կենտրօնական Մատնաժողովին Կիւլպէնկեան առևտրական տան միջոցով։ Վերջին անգամ փող ուղարկելուց յետոյ մնում էր մեզ մօտ 83 ր. 1 կ։ Դրանից յետոյ ժողովեցաւ 2561 ր. 20 կ., որ մնացորդ 83 ր. 1 կ., գումարի հետ անում է 2644 ր. 21 կ։ Այդ գումարից այժմ 2000 բուբլ ուղարկելուց յետոյ, մնում է մեր խմբագրութեան մէջ, հեռագրի ծախսը հանած՝ 641 բուբլ։ Ուրեմն մօտ երկու ամսվայ ընթացքում «Մշակը» ուղարկեց յօգուտ Թիւրքաց Հայաստանի հայ սովալուկների ընդամենը 20,000 բուբլ։

—

Ապրիլի 4-ին, թագաւոր Կայսրի հրաշալի փրկութեան տարեդարձին, ԹԻՖԼԻՍԻ բժշկանոցի մէջ, որ հիմնվեցաւ քաղաքիս բնակիչների ձեռքով այդ օրվայ յիշատակին, կը կատարվեն հանդիսաւոր մաղթանքներ։ Դրանից առաջ կը կատարվեն հանդիսաւոր մաղթանքներ Երևանեան հրապարակի վրա։

—

ԲԷՆԼԱՐԲԱՆԴԻՑ մեզ գրում են, որ Նուխու գաւառում տիրում է ամեն մթերքների այնպիսի սաստիկ թանգութիւն, որպիսին ամենահին ծերունիները իրանց կեանքում երբէք տեսած չեն։ Ցորենի մի թաղարը, որ արժէր անցեալ տարիներում 5 բուբլ, այժմ վաճառվում է 70 բուբլ, կորեկը, որ արժէր առաջ 3 ր., այժմ վաճառվում է 50 ր։ Գարի ամենևին չէ գտնվում։ Խոտի մի սայլ արժէ 25 բուբլ, իւղի մի պուդ 20 ր., մի հաւ 40 կօպէկ, մսի ֆունտը 20 կ։ Գիւղացիները մեծ նեղութեան մէջ են և օրերով բան չեն գտնում ուտելու։

—

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՑ հետևեալը։ «Տեղիս հասարակութենից ընտրված մարդիկ, որոնք ցորենի ամբարի կոմիտետ են անուանվում, շատ թոյլ են տանում իրանց գործունէութիւնը։ Սրանցից ամսական հերթակալութեամբ մի հայ և մի թուրք գնում են Թիֆլիս, այնտեղից ցորեն առնում և ուղարկում։ Ասում են որ շատ անգամ գնացողները ի չարն են գործ դնում հասարակութեան հաւատարմութիւնը։ Մթթէ առանց հրապարակ հանելու պէտք է մնայ նրանց գործունէութիւնը։ Մենք յոյս ունենք կոմիտէտի անդամներից միայն մինի վրա, որ լրում կը տայ հասարակութեան հետաքրքրութեանը ճիշդ տեղեկութիւններով կոմիտէտի գործունէութեան մասին։»

—

Զարմանալի սովորութիւն ունեն ԹԻՖԼԻՍԻ հեռագրական կայարանի մի քանի ծառայողները։ Երբ տների ծառաներն են բերում հեռագիրները, պարոններ պաշտօնեաները շատ անգամ սխալվում են և 30, 50, 60 կոպէկ աւելի են վեր առնում հեռագրի համար։ Յետոյ երբ տէրը ինքն է գալիս և յիշեցնում է նրանց թէ աւելորդ փող վեր առան հեռագրի համար,—այն ժամանակ այդ պարոնները կրկին յետ են տալիս փողը։ Այդ տեսակ դէպքեր մեր ծանօթներից շատերի հետ են պատահել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս եկաւ մամուլի տակից և ԾԱԽՎՈՒՄ Է ԹԷ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և ԹԷ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Մատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, Հրատարակութիւն Ս. Արծրունւոյ: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

4—5

Nous recommandons aux jeunes gens qui désirent aller en France terminer leurs etudes, l'Institution ROUSSEL à MARSEILLE. (Cours Julien, 14).—Des soins particulièrs sont, donnés aux langues vivantes. Sadresser á l'Institution, qui envoie un prospectus.

2—4

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է՝ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մբշակի» խմբագրատանը Յ. ՄԻՔԼԻՈՒՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դոկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԴՈՄԱԴՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

9—10

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում:

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:

2. Դոկտոր Բոկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:

3. Փրէյդուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.:

4. Պուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:

5. Դամառ-Ռաթիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:

6. Նոյնը կազմած — 25 կ.:

7. Սիլվիո Փէլիքօի Ֆոսմինիացին Ֆրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Իտալիան. Տարօնոյ ծերը: Ը. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինը է — 70 կ.:

9—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վեսիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդկօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Մ. Միանսարեանցի ի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Այոց Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4|2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով:

1. Այկական Երգեր, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . . 70 կ.

4 Հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 բուբլու:

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.

1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 բուբլու:

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես: 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 բուբլու: . . . . . 10 կ.

4. Գունատ մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը: № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. ստօպան, կամ 480 թերթը, 4 բուբլի, մօտ 340 ստօպ, մօտ 1360 բուբլու: Թերթը մի կոպէկից պակաս:

5. Տղաշարներև տղացանցեր մեծ թաքաղա, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 բուբլու, թերթը . . . . . 5 կ.

6. Կոմրը ուսուցչապետի և անգղիացւոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300: . . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 բուբլու:

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 բուբլու:

Տպագրողը ինքը բնակվում է Ս. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Ցիանաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետևեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

1. Երգնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում: գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատունեանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց: Դիֆտերիտ բոզազացաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Գ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ:)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ:

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

8—8

Փետրվարի 12-ից ԲԱՅՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՈՆԴԻՏԷՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կոնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով: կոնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ДВОЙНАЯ ИТАЛІАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

Մի երիտասարդ տալիս է հաշուապահութեան դասերը՝ բանկի, ֆաբրիկայի, առևտրական կոմմիսիոնէրութեան, երկաթուղու և այլն:

Հարցնել Թիֆլիսի Կազեռնի Պալատում, կամ Սուրբ Նշանի փողոցում, Միրզոյ սուդի գիմացը, № 17 պ. Յակոբ Տէր-Յակոբեանցին:

3—5

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԻՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ստարշինաների խորհուրդը յայտնում է պ. պ. անդամներին, որ ընդհանուր ժողովի վճռին համեմատ՝ անդամական լրացուցիչ տուրքի 7 բուբլի վճարելը նշանակված է մինչև ապրիլի 1-ը 1880 թվ: Իսկ ովքոր չի վճարի այդ փողը նշանակված ժամանակամիջոցին, կը համարվի ընկերութեան անդամութենից հրաժարեցրած:

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» կանոնադրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւադեանին Թիֆլիսի Առևտրական բանկայ առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ՝ պարոն Աբգար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան:

5—10

Տպագրութեան համար պատրաստ են. «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկոտի, «Աբրահամ Լինկօլն՝ սարուկներին ազատող» Վիլհելմ Հօֆմանի, և Մոլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայթարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մոլիէրի հետ «Տարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նօտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԵՑ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվին ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՑ ԹԻԻԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մասնաւոր և բանկային վէքսէլներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, ես անուավեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Дозволено Цензурою 2 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона